ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն՝ Ա.Մաթևոսյան
«10 »սեպտեմբեր

# Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

## ՀՀ Շիրակի մարզի <<Հարթաշենի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ 1-ին, 2-րդ, 4-րդ եռահամակազմ դասարաններ

**ուսումնական հաստատության անվանումը , դասարան**

## Գրիգորյան Հերմինե Լյովայի

**դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը**

**« 2022- 2023» ուսումնական տարի**

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը) 1-ին դասարան են ընդունվել չորս աշակերտներ: Նրանք չունեն ֆիզիկական արատ, ցուցաբերում են կազմակերպվածություն և ակտիվություն:

   2-րդ դասարանում սովորում է մեկ աշակերտ, 4-րդ դասարանում՝ մեկ աշակերտ:
   Եռահամակազմ դասարանում ստեղծվել է փոխադարձ հարգանքի մթնոլորտ, բարեհամբույր վերաբերմունք միմյանց նկատմամբ:

2. **ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

   Հետևել աշակերտների կարգապահությանը, հիգիենային: Ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ կատարել անհատական աշխատանքներ:
   Ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին: Բացատրել աշակերտներին, թե ինչպես պետք է իրենց պահեն տանը, դպրոցում,տրանսպորտում և այլ հասարակական վայրերում:

3. **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

**3. 1Հոգևոր դաստիարակություն**

Դասվարի ժամերին անցկացնել զրույց-զեկուցումներ հայեցի դաստիարակության մասին, ծանոթացնել կրոնական ծեսերին, տալ հոգևոր դաստիարակություն:

**3. 2 Գեղագիտական դաստիարակություն**

Գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով պետք է հաճախակի կազմակերպել էքսկուրսիա դեպի բնություն, թանգարաններ, պատկերասրահ:
Երեխաների մեջ սեր առաջացնել գեղեցիկի հանդեպ:

**3. 3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն**

Երեխաների հետ հաճախակի անցկացնել զրույցներ հայ ժողովրդի պատմական անցյալի, հայերի տարած հաղթանակների, ինչպես նաև արցախյան պատերազմում զոհված հայ հերոսների մասին: Խոսել հաղթական տոների մասին:

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն**

Շարժական խաղերը ամրապնդում են առողջությունը և կոփում օրգանիզմը:

Հաճախակի կազմակերպել արշավներ:

**3. 5 Աշխատանքային դաստիարակություն**

Տեխնոլոգիայի դասաժամերին պատրաստել բնական և արհեստական նյութերով կոմպոզիցիաներ: Սեր առաջացնել աշխատանքինկատմամբ, ստեղծածը արժեվորելու նկատմամբ:

**3. 6 Բնապահպանական դաստիարակություն**

Դասարանում ունենալ կանաչ անկյուն: Երեխաներին սովորեցնել մշակել, խնամել, վերատնկել բույսերը:

Սիրել ու պահպանել բնությունը:

4. **ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ**

Անցկացնել ծնողական ժողովներ, ծնողներին ընդգրկել ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ:

Ամրապնդել դպրոց- ընտանիք փոխադարձ կապը: Քննարկել երեխաների դպրոց հաճախելու պատրաստվածության աստիճանը:

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Կազմակերպչական հարցերի քննարկում | 06.09 | Դասվար, աշակերտներ |
| II | Զրույց դասագրքերի պահպանման, դասասենյակի մաքրության, դպրոցական կարգ ու կանոնի մասին | 15.09 | Դասվար, աշակերտներ |
| III | Զրույց <<Ազատ, անկախ իմ Հայաստան>>թեմայով | 20.09 | Դասվար, աշակերտներ |
| IV | Զրույց ընկերության, միմյանց օգնելու, աջակցելու վերաբերյալ | 27.09 | Դասվար |
| V | Ճանապարհային երթևեկության կանոններ | 07.10 | Դասվար |
| VI | Զրույց սանիտարահիգենիկ կանոնների պահպանման մասին | 14.10 | Դասվար |
| VII | Աշնանային արձակուրդների անցկացման պլանի կազմում | 21.10 | Դասվար |
| VIII | <<Սովորիր ներողություն խնդրել>>թեմայով զրույց | 01.11 | Դասվար |
| IX | Ինչպես օգնել ընկերոջը | 11.11 | Դասվար, աշակերտ |
| X | <<Ամեն բան պետք է դնել իր տեղում>> | 18.11 | աշակերտ |
| XI | Զրույց <<Աղանդների վնասակարության մասին>> | 25.11 | Դասվար-աշակերտ |
| XII | Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները | 02.12 | Դասվար-աշակերտ |
| XIII | Թեմա1. Դաս 1. Ով եմ ես: Ես, Դու, Մենք հասկացությունները | 09.12 | Դասվար |
| XIV | <<Դասարանը իմ երկրորդ ընտանիքն է>> թեմայով զրույց | 15.12 | Դասվար-աշակերտ |
| XV | Կազմակերպված անցկացնել Ամանորին նվիրված տոնակատարությունը | 23.12 | Դասվար-աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| XVI | Անցկացնել ծնողական ժողով՝ 1-ին կիսամյակի արդունքների ամփոփում | 11.01.2023 | Դասվար-ծնողներ |
| XVII | Թեմա 2. Դաս 1. Մեզ պետք են տարբերություններ: Խաղաղ ապրելու համար պետք է հարգել և հանդուրժել տարբերությունները | 20.01 | Դասվար-աշակերտ |
| XVIII | Զրույց <<Հայրենիքը սկսվում է իմ տնից>> թեմայով | 27.01 | Դասվար-աշակերտ |
| XIX | <<Ես քաղաքացին եմ ողջ աշխարհի>>: Աշակերտները կկարողանան կարևորել և գնահատել ազգային արժեքները, հասկանալ իրենց տեղն աշխարհում | 03.02 | Դասվար-աշակերտ |
| XX | Դաս 2. << Բոլորս տարբեր ենք>>: Օտարին ճանաչելը նպաստում է խաղաղ գոյակցությանը, մինչդեռ մերժումը կարող է հանգեցնել կոնֆլիկտի | 10.02 | Դասվար-աշակերտ |
| XXI | Զրույց <<Պահպանենք բնությունը, պահպանենք կյանքը թեմայով>> | 17.02 | Դասվար-աշակերտ |
| XXII | Տեղեկություններ արտակարգ իրավիճակների, բնակչության տարհանման և ազդարարման, լրատվության ինչպես նաև գործելակերպի հաջորդականության կազմակերպման մասին: | 24.02 | Դասվար-աշակերտ |
| XXIII | Բանավեճ. արդյոք ամեն ինչ անում ես իսկապես սովորելու համար | 03.03 | Դասվար-աշակերտ |
| XXIV | Ցերեկույթ նվիրված մայրության և գեղեցկության մեկամսյակին: | 09.03 | Դասվար-աշակերտ |
| XXV | Զրույց <<Ինչ եմ ուզում դառնալ>> թեմայով | 17.03 | աշակերտներ |
| XXVI | Աշակերտների հաղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորում | 24.03 | Դասվար |
| XXVII | Ընթերցողական փորձի ընդլայնում, գրքի հանդեպ հետաքրքրության աճի դրսևորում: | 06.04 | Դասվար |
| XXVIII | Կենդանիների, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում: | 14.04 | Դասվար |
| XXIX | Աշակերտների ճիշտ տեղակայումը և կանոնների պահպանումը պաշտպանական կառույցներում: | 21.04 | Դասվար |
| XXX | Աշակերտների պաշտպանության կազմակերպումը՝ վթարների,տարերային | 28.04 | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| | աղետների ժամանակ: | | |
| XXXI | Անցկացնել զրույց <<Մեր հաղթանակը>> թեմայով: | 05.05 | Դասվար-աշակերտ |
| XXXII | Կազմակերպել շաբաթօրյակ, մասնակցել դպրոցի, բակի բարեկարգման աշխատանքներին | 12.05 | Դասվար-աշակերտ |
| XXXIII | Ողջու՛յն ամառ | 17.05 | Աշակերտ |
| XXXIV | Հրավիրել ծնողական ժողով՝ քննարկել 2-րդ կիսամյակի արդյունքները | 25.05 | Դասվար-ծնողներ |
| | | | |